ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 251 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՄԱՅԱԿԻ ԱԹՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-117-0006-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 27-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Հարություն Հմայակի Աթոյանի դիմումը որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Փոքր Սեպասար բնակավայրում գտնվող քաղաքացի Հարություն Հմայակի Աթոյանի սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, բնակավայր, Փոքր Սեպասար, 2-րդ փողոց, բնակելի տուն 14 հասցեում գտնվող, 08-117-0006-0002 կադաստրային ծածկագրով 0,05036 հեկտար մակերեսով հողամասին և նրանում առկա շինություններին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Փոքր Սեպասար, 2-րդ փողոց, բնակելի տուն 14:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի N 252 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՍԵՊԱՍԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-117-0006-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.05036 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հարություն Հմայակի Աթոյանը դիմել է Աշոցք համայնքի ղեկավարին Շիրակի մարզ համայնք Փոքր Սեպասար գյուղում գտնվող 08-117-0006-0002 կադաստրային ծածկագրով 0.05036 հա մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան, աստիճանահարթակի և ավտոտնակի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչելու խնդրանքով:

Ղեկավարվելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ դրանք կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը՝ որոշում եմ.

1. Ճանաչել քաղաքացի Հարություն Հմայակի Աթոյանի (ծնված՝ 26.01.1960թ., անձնագիր՝ AT 0309175 տրված՝ 19.11.2019թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Փոքր Սեպասար, 2-րդ փողոց, բնակելի տուն 8) սեփականության իրավունքը Շիրակի մարզ, համայնք Աշոցք, Փոքր Սեպասար գյուղում գտնվող 08-117-0006-0002 կադաստրային ծածկագրով 0.05036 հա մակերեսով հողամասի և հողամասում մինչև

2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շենքեր, շինությունների նկատմամբ:

2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2026 թվականի N 253-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՍՈՒՆ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Տեղական տուրք ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 78-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «գ» պարբերության դրույթներով, որոշում եմ.

1.Անհատ ձեռնարկատեր Սասուն Քոթանջյանին (հարկ վճարողի հաշվառման համարը՝ 57271287, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.00205/2009-12-01, իրավաբանական հասցեն՝ Աշոցք համայնք, գյուղ Սիզավետ, 1 փողոց, 19, ընդհանուր մակերեսը՝ 58,11 քառակուսի մետր)

1) Տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն:

2) Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը:

3)Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին անհատ ձեռնարկատեր Սասուն Քոթանջյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2026 թ. օգոստոսի 3
գ.Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2026 թվականի N 254-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Աշոտ Սամվելի Տիգրանյանը /Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք, գյուղ Գոգիովիտ, 10-րդ փողոց, տուն 2, անձնագիր՝ AV0389644/, հանդիսանալով անշարժ գույքի հարկ և պայմանագրով նախատեսված վարձավճար վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանարպետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված պայմանագրով նախատեսված վարձավճար տալու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2026 թվականի օգոստոսի 3-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի և պայմանագրով նախատեսված վարձավճարի գանձման հարցի քննության նպատակով:«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տվյալների հարկման օբյեկտ հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգիովիտ բնակավայրի տարածքում գտնվող, ներքոհիշյալ անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Աշոտ Սամվելի Տիգրանյանի սեփականությունը և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել հողի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0018-0014/ 0.058 հա բնակելի կառուցապատման հողի համար,
2) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0026-0005/ 0.158 հա բնակելի կառուցապատման հողի համար,
3) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0102-0008/ 0.538 հա անջրդի վարելահողի համար,
4) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0121-0042/ 0.058 հա անջրդի վարելահողի համար,
5) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0102-0007/ 0.312 հա անջրդի վարելահողի համար,
6) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0111-0012/ 0.306 հա ջրովի վարելահողի համար,
7) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0115-0041/ 0.396 հա անջրդի վարելահողի համար,
8) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0121-0054/ 0.284 հա անջրդի վարելահողի համար,
9) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0103-0012/ 0.548 հա անջրդի վարելահողի համար,
10) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0030-0039/ 0.609 հա բնակելի կառուցապատման հողի համար,
11) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0121-0056/ 0.458 հա անջրդի վարելահողի համար,
12) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0105-0036/ 0.37 հա ջրովի վարելահողի համար,
13) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0121-0055/ 0.472 հա անջրդի վարելահողի համար,
14) գյուղ Գոգհովիտ, /կադաստրային ծածկագիր՝ 08-034-0111-0013/ 0.577 հա ջրովի վարելահողի համար

ընդհանուր մինչև 2020 թվականը ապառքը՝ 267 289 դրամ, տույժ՝ 130 417 դրամ, վճարման ենթակա՝ 397 706 դրամ, 2021-2026 թվականներին ապառքը՝ 143 088 դրամ, տույժ՝ 37 299 դրամ, վճարման ենթակա՝ 180 387 դրամ:

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի հետ Աշոտ Սամվելի Տիգրանյանի 06/09/2017 կնքած պայմանագրերի տվյալների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ բնակավայրի տարածքում գտնվող անշարժ գույքերը հանդիսանում են քաղաքացի Աշոտ Սամվելի Տիգրանյանի վարձակալության պայմանագրի օբյեկտ և քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս կողմից չի կատարվել պայմանագրով նախատեսված վարձավճար վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է ընդհանուր՝ 327 298 դրամ պարտք:

Ընդհանուր առմամբ՝ Աշոտ Սամվելի Տիգրանյանի պարտքը կազմում է 905 391 դրամ:

Աշոտ Սամվելի Տիգրանյանը պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 03.07.2026 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին:Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն

հանգամանքը, որ Աշոտ Սամվելի Տիգրանյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո, պնդում չի ներկայացրել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայան Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, ինչպես նաև բազմաբնակարան շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի՝ բազմաբնակարան շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով այդ սեփականատերերին պատկանող հողամասի մասով:

Համաձայն Հայաստանի Հանարապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ, 225-րդ, 398-րդ և 401-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1.Քաղաքացի Աշոտ Սամվելի Տիգրանյանից հօգուտ Աշոցք համայնքի բյուջե գանձել 905 391 (ինը հարյուր հինգ հազար երեք հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Որոշումն օրենքով սահմանված կարգով՝ պատշաճ ձևով հանձնել Աշոտ Սամվելի Տիգրանյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից (ashotsq.am և azdarar.am կայքերի միջոցով):

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Աշոցք համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանարապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2026 թ. օգոստոսի 3
գ.Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2026 թվականի N 255-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 2-րդ մասով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգիծածկագիրը	Պայմանագրի					Մասնակցի		Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմքը
	չափաբաժնի համարը	գնման առարկայի անվանումը	չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/	չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/	անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն		
1	3	4	5	6	7	8	9	11	12
ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁ Բ-26/23	1	թափառող կենդանիների (շների) ստերիլիզացման, ամլացման ծառայություն	1 500 000	1 449 000	«Ս.Վ.Պ.» ՍՊԸ	05569197	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վարդաբաղ 1թաղ. 1մ/շ, 5, շենք, բն 22	ԱՇՈՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ	Կատարողի կողմից խախտվել են ծառայության մատուցման ժամկետները, ինչը Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն համարվում է պայմանագրի էական խախտում: Մասնակիցը չի պատասխանել հեռախոսազանգերին և չի կատարել իր ստանձնած պարտավորությունները, ինչի հիմքով Պատվիրատուն 03.08.2026թ.հրապարակելէպայմանագիրըմիակողմանիլուծելումասին ծանուցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2026 թ. օգոստոսի 3
գ.Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 օգոստոսի 2026 թվականի N 256 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՎՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԱՄԱՐԱ ԿԱՐԱՊԵՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-026-0009-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 28-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Լամարա Պետրոսյանի դիմումը որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում գտնվող քաղաքացի Լամարա Կարապետի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, բնակավայր, Բավրա, 3-րդ փողոց, բնակելի տուն 11 հասցեում գտնվող, 08-026-0009-0017 կադաստրային ծածկագրով 0,0033 հեկտար մակերեսով հողամասին և նրանում առկա շինությանը տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Բավրա, 3-րդ փողոց, բնակելի տուն 11:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 04
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 օգոստոսի 2026 թվականի N 257 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՎՐԱ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-026-0009-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0033 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Լամարա Կարապետի Պետրոսյանը դիմել է Աշոցք համայնքի ղեկավարին Շիրակի մարզ համայնք Բավրա գյուղում գտնվող 08-026-0009-0017 կադաստրային ծածկագրով 0.0033 հա մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչելու խնդրանքով:

Ղեկավարվելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-ին և 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը՝ որոշում եմ.

1. Ճանաչել քաղաքացի Լամարա Կարապետի Պետրոսյանի (ծնված՝ 07.11.1974թ., նույնականացման քարտ՝ 010214716 տրված՝ 03.12.2017թվական, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Բավրա, 3-րդ փողոց, բնակելի տուն 11) սեփականության իրավունքը Շիրակի մարզ համայնք Աշոցք, Բավրա գյուղում գտնվող 08-026-0009-0017 կադաստրային ծածկագրով 0.0033 հա մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան նկատմամբ:

2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 04
գյուղ Աշոցք